

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (24)

Естественные и физико-математические науки

(География и геология, информатика и прикладная математика, биология,
математика и механика, химия, фармацевтика, физика)

Natural and Physical-Mathematical Sciences

(Geography and Geology, Informatics and Applied Mathematics, Biology,
Mathematics and Mechanics, Chemistry, Pharmacy, Physics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2018

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (24)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ

(աշխարհագրություն և երկրաբանություն, ինֆորմատիկա և կիրառական
մաթեմատիկա, կենսաբանություն, մաթեմատիկա և մեխանիկա,
քիմիա, ֆարմացիա, ֆիզիկա)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան
ք.գ.դ., պրոֆ. Ն. Դուրգարյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
ա.գ.թ., դոց. Ա. Պոտոսյան
ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
ե.գ.թ., դոց. Ռ. Մովսեսյան
կ.գ.թ., դոց. Հ. Փանոսյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրյան
կ.գ.թ. Ն. Ավթանդիլյան
ֆ.մ.գ.թ. Պ. Պետրոսյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Ваданян
д.б.н., проф. Л. Навасардян
д.х.н., проф. Н. Дургарян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. А. Потосян
к.г.н., доц. М. Григорян
к.г.н., доц. Р. Мовсесян
к.б.н., доц. О. Паносян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.б.н. Н. Автандилян
к.ф.м.н. П. Петросян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. L. Navasardyan
DSc, Prof. N. Durgaryan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Potosyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. R. Movsesyan
PhD, Associate Prof. H. Panosyan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD N. Avtandilyan
PhD P. Petrosyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական
ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.yasu.am.

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ
ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ**

ՀՀ ռազմավարական զարգացման խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ և դեր ունի լեռնային և բարձր լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացումը: Տարածքային սահմանափակ ռեսուրսներ ունեցող մեր երկրում այդպիսի շրջանների համաչափ զարգացումը և դրանցում առկա բնակավայրերի ամրապնդումն ունեն կենսական նշանակություն, քանի որ լեռնային և բարձր լեռնային շրջանները (ծովի մակարդակից 1700 մ-ից բարձր) զբաղեցնում են ՀՀ ցամաքային տարածքի 60 %-ից ավելին, այդ շրջաններում են գտնվում քաղաքային 13 և գյուղական 344 բնակավայր: 2016 թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներին բաժին էր ընկնում երկրի բնակչության 17 %-ը (քաղաքային բնակչության՝ 8, գյուղական բնակչության՝ 34 %-ը) [1]:

Խնդրի դրվածքը և հետազոտության նպատակը: ՀՀ լեռնային և բարձր լեռնային շրջանների տնտեսության զարգացման մեջ առանձնահատուկ տեղ և դեր ունեն գյուղական տարածքներն ու բնակավայրերը: Այդպիսի շրջաններում են գնտվում ՀՀ գյուղական բնակավայրերի ավելի քան 36 %-ը: ՀՀ լեռնային և բարձր լեռնային շրջանների տարածքային ռեսուրսների ու գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը և տնտեսական առաջընթացն այլ գործոնների հետ միասին կախված է նաև մարդկային առկա ներուժի արդյունավետ օգտագործումից և օպտիմալ կառավարումից: Ուստի, այդպիսի տարածքների ժողովրդագրական իրավիճակի հիմնական բաղադրիչներից մեկի՝ գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի ուսումնասիրությունը չափազանց արդիական է և ունի ոչ միայն գիտական, այլև կիրառական կարևոր նշանակություն: Հետազոտության նպատակն է ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի (ըստ հիմնական տարիքային խմբերի) առանձնահատկությունների, տարածքային տարբերությունների և առկա հիմնախնդիրների բացահայտումը, լուծման ուղիների մատնանշումը:

Հետազոտության նյութերը և մեթոդները: Հետազոտության համար հիմք են դարձել ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական 344 բնակավայրերի առկա բնակչության՝ տարիքային հիմնական խմբերի բաշխման վերաբերյալ ԱՎԾ վիճակագրական տվյալները: Կատարվել է նշված տվյալների վերլուծություն, ամփոփում և ընդհանրացում: Աշխատանքում կիրառվել են հետազոտության վիճակագրական, համեմատական-աշխարհագրական և քարտեզագրական մեթոդները:

Հետազոտության արդյունքները և քննարկումը: Վերջին ավելի քան երկուսուկես տասնամյակի ընթացքում ՀՀ-ում տեղի ունեցած հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացների և մեր տարածաշրջանում գոյություն ունեցող աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով երկրում առաջացել է ժողովրդագրական չափազանց լարված իրավիճակ: Միայն 2001-2016 թթ. ընթացքում հանրապետության մշտական բնակչության թվաքանակը նվազել է 214.4, իսկ 1992-2016 թթ.-ին՝ շուրջ 635 հազարով [2]: 1991 թ. համեմատությամբ 2015 թ.-ին հանրապետությունում ծնելիության գործակիցը նվազել է 7.7 պրոմիլով (21.6-ից՝ 13.9 ‰), մահացության գործակիցը 6.5-ից հասել է 9.3 ‰-ի [2]: 1991 թ. համեմատությամբ ՀՀ-ում բնակչության բնական հավելածի գործակիցը նվազել է 3.28 անգամ, այն է՝ 15.1-ից նվազել է 4.6 ‰ [2]: Նշված գործընթացների պատճառով նկատելի փոփոխություններ է կրել ՀՀ բնակչության սեռատարիքային կառուցվածքը: Բացի այդ, անցած քսանհինգ տարիների ընթացքում ՀՀ-ում 11.8 տոկոսային կետով նվազել է մինչաշխատունակ տարիքի բնակչության (USF) տեսակարար կշիռը, իսկ աշխատունակ տարիքի բնակչության (ASF) տեսակարար կշիռն ավելացել է 12.4 տոկոսային կետով [3]:

Անկախության տարիներին բնակչության ժողովրդագրական իրավիճակում տեղի ունեցած վերը նշված փոփոխություններն առավել սուր են արտահայտված ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածաշրջաններում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում: Այդպիսի տարածքներում և բնակավայրերում ՀՀ-ին բնորոշ սոցիալ-տնտեսական ընդհանուր հիմնախնդիրներից բացի տնտեսական գործունեության համար լրացուցիչ դժվարություններ են առաջացնում նաև տեղանքի բարձրությունը, տարածքի մասնատվածությունը, ջերմաստիճանային պայմանները, ենթակառուցվածքների համեմատաբար թույլ զարգացվածությունը, մայրաքաղաքից հեռու գտնվելու հանգամանքը և այլն: «Լեռնային շրջանների առավել բնութագրական կողմն ուղղաձիգ գոտիականությունն է, որն իր հերթին պայմանավորում է մարդու տնտեսական գործունեության մի շարք առանձնահատկությունները», - նշում է պրոֆեսոր Գ. Ավագյանը [4]:

Հանրապետության լեռնային և բարձր լեռնային գյուղական 344 բնակավայրերից 173-ը լեռնային են, 171-ը՝ բարձր լեռնային: Բնակչության ընդհանուր թվաքանակում 57.1 %-ը բաժին է ընկնում բարձր լեռնային, մնացածը՝ լեռնային գյուղական բնակավայրերին: Գյուղական լեռնային բնակավայրերի միջին մարդաքանակը կազմում է 897, իսկ բարձր լեռնայիններինը՝ 1209 մարդ: Գյուղական լեռնային բնակավայրեր Արմավիրից բացի կան նաև այլ մարզերում, իսկ բարձր լեռնային՝ բոլոր մարզերում՝ բացառությամբ Արարատի, Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերի:

Աղյուսակ 1. ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի ու բնակչության բաշխումն ըստ մարզերի* (2015 թ.) [5]

Մարզերը	Ընդամենը		Լեռնային		Բարձր լեռնային	
	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը
Արագածոտն	64	48000	25	21499	39	26501
Արարատ	6	2719	6	2719	0	0
Գեղարքունիք	83	160073	8	9489	75	150584
Լոռի	30	34237	30	34237	0	0
Կոտայք	23	28087	18	24003	5	4084
Շիրակ	81	65257	45	43523	36	21734
Վայոց ձոր	19	7088	13	5542	6	1546
Սյունիք	38	16420	28	14096	10	2324
ՀՀ-ում	344	361881	173	155108	171	206773

*Տավուշի մարզի լեռնային համարվող միակ բնակավայրը՝ Գեղատափը, մշտական բնակչություն չունի

Լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի թվի 67 և բնակչության 75.5 %-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերին (մանրամասն տե՛ս Աղյուսակը 1-ը):

Աղյուսակի 2-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի տոկոսային միջին ցուցանիշների (0-15 տարեկաններ՝ 21.1 %, 16-62 տարեկաններ՝ 67.7 %, 63 և բարձր տարեկաններ՝ 11.2 %) և ՀՀ համապատասխան միջին ցուցանիշների (20.5, 67.9 և 11.6 % [3]) միջև տարբերությունները մեծ չեն: Սակայն մարզերի դեպքում այդ ցուցանիշների որոշակի տարբերություններ կան (մանրամասն տե՛ս Աղյուսակ 2-ը): Վայոց ձորի, Շիրակի, Սյունիքի և Լոռու մարզերում 0-15 տարեկան գյուղական բնակչության մասնաբաժինը ցածր է լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության հանրապետական միջին ցուցանիշից: Այդ տարբերությունն առավել ակնհայտ է Սյունիքի և Շիրակի բարձր լեռնային, իսկ Գեղարքունիքում, Վայոց ձորում և Արագածոտնում՝ լեռնային գյուղական բնակավայրերում:

Դժվար չէ նկատել, որ նշված մարզերը ՀՀ-ում առանձնանում են ոչ միայն իրենց աշխարհագրական դիրքով, մայրաքաղաքից ունեցած հեռավորությամբ և տարածքի մասնատվածությամբ, այլև սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախընդիրներով: Այդ ամենն իր ազդեցությունն է թողնում նաև նշված մարզերի, մասնավորապես՝ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի վրա:

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածք ունեցող մարզերից գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի առավել բարենպաստ իրավիճակով առանձնանում է Գեղարքունիքը: Այստեղ գյուղական բնակչության մինչաշխատունակ (0-15 տարեկաններ) տարիքային խմբի բաժինը բարձր է ՀՀ և լեռնային ու բարձր լեռնային շրջանների համապատասխան միջին ցուցանիշից: Բացի այդ, մարզում աշխատունակ տարիքից բարձր գյուղական բնակչության մասնաբաժինն ամենացածրերից է ՀՀ-ում (10.4 %): Լեռնային ու բարձր լեռնային տարածքների գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի գրեթե նմանատիպ պատկեր ունի Կոտայքի մարզը, թեև այստեղ գյուղերի և բնակչության թիվը զգալիորեն պակաս է Գեղարքունիքից (տե՛ս Աղյուսակ 2-ը):

Գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի առավել անբարենպաստ իրավիճակ ունեն Վայոց Ձորի մարզի լեռնային և բարձր լեռնային 19 գյուղ: Դրանցում մինչաշխատունակ բնակչության տեսակարար կշիռը 4.1 տոկոսային կետով պակաս է ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի միջին ցուցանիշից, իսկ աշխատունակ տարիքից բարձր խմբի մասնաբաժինը 2.4 տոկոսային կետով բարձր է ՀՀ միջինից (տե՛ս Աղյուսակ 2-ը):

Մարզերը	Բնակչության թիվն ըստ տարիքային հիմնական խմբերի				Գյուղերի թիվը	Ընդհանուր բնակչության թիվը
	0-15, մարդ (%)	16-62, մարդ (%)	63 և բարձր, մարդ (%)	15-49, մարդ (%)		
Արագածոտ	10452	31326	6222 (13.0)	13290	64	48000
Արարատ	674 (24,8)	1659	386 (14.2)	623 (22.9)	6	2719
Գեղարքուն	34864	108578	16631 (10.4)	40673	83	160073
Լոռի	7091	23632	3514 (10.3)	8370	30	34237
Կոտայք	5956	19185	2946 (10.5)	6722	23	28087
Շիրակ	12962	44870	7425 (11.4)	25495	81	65257
Սյունիք	3382	10666	2372 (14.4)	7156	38	16420
Վայոց Ձոր	1202 (17.0)	4923	963 (13.6)	1806	19	7088
ՀՀ-ում	76583(21.1)	244839	40459 (11.2)	104116	344	361881

Աղյուսակ 2. ՀՀ մարզերի լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի (2015 թ.)

Մարզերը	Բնակչության թիվն ըստ տարիքային հիմնական խմբերի				Գյուղերի թիվը	Ընդհանուր բնակչության թիվը
	0-15, մարդ (%)	16-62, մարդ (%)	63 և բարձր, մարդ (%)	15-49, մարդ (%)		
Արագածոտ	4108 (19.1)	14929	2462 (11.5)	6600	25	21499
Արարատ	674 (24.8)	1659	386 (14.2)	623 (22.9)	6	2719
Գեղարքուն	1700 (17.9)	6715	1074 (11.3)	2404 (25.3)	8	9489
Լոռի	7091	23632	3514 (10.3)	8370 (24.4)	30	34237
Կոտայք	5028	16486	2489 (10.4)	5482 (22.8)	18	24003
Շիրակ	8658	29809	5056 (11.6)	17871(41.1)	45	43523
Սյունիք	2937	9132	2027 (14.4)	6078 (43.1)	28	14096
Վայոց Ձոր	927 (16.7)	3827	788 (14.2)	1461 (26.4)	13	5542
ՀՀ-ում	31123	106189	17796 (11.5)	48889	173	155108

Աղյուսակ 3. ՀՀ մարզերի լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի (2015 թ.)

Լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի անբարենպաստ իրավիճակով առանձնանում է նաև Սյունիքի մարզը: Այստեղ նմանատիպ 38գյուղերում, որոնք ունեն ավելի քան 16 հազար բնակիչ, թեև 0-15 տարեկանների մասնաբաժինը հավասար է ՀՀ ընդհանուր բնակչության միջին ցուցանիշին, սակայն հետաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակչության միջին ցուցանիշից մեծ է 3,2 տոկոսային կետով: Ուշադրության է արժանի նաև Արագածոտնի մարզը: Այստեղ լեռնային և բարձր լեռնային 64 գյուղերի մինչաշխատունակ բնակչության տարիքային խմբի մասնաբաժինը 0.7 տոկոսային կետով բարձր է ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության միջին ցուցանիշից, որը, նախևառաջ, բացատրվում է բնակչության ազգային կազմում եզրի բնակչության առկայությամբ (վերջիններս ՀՀ-ում առանձնանում են ծնելիության համեմատաբար բարձր մակարդակով): Սակայն հետաշխատունակ բնակչության մասնաբաժինը 1.8 տոկոսային կետով (բարձր լեռնային գյուղական բնակավայրերում՝ 3.2) բարձր է միջին ցուցանիշից: Մեծահասակ բնակչության տեսակարար բարձր կշռով առանձնանում են նաև Արարատի մարզի լեռնային 6 գյուղեր (տե՛ս Աղյուսակ 3-ը): Այստեղ հանրապետության մասշտաբով աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինն ամենացածրն է ՀՀ լեռնային գյուղական բնակավայրերում:

Մարզերը	Բնակչության թիվն ըստ տարիքային հիմնական խմբերի				Գյուղերի թիվը	Ընդհանուր բնակչության թիվը
	0-15, մարդ (%)	16-62, մարդ (%)	63 և բարձր, մարդ (%)	15-49, մարդ (%)		
Արագածոտն	6344	16397	3760 (14.2)	6690	39	26501
Գեղարքունիք	33164	101863	15557 (10.3)	38269	75	150584
Կոտայք	928	2699	457 (11.2)	1240	5	4084
Շիրակ	4304	15061	2369 (10.9)	7624	36	21734
Սյունիք	445	1534	345 (14.9)	1059	10	2324
Վայոց Ձոր	275	1096	175 (11.3)	345	6	1546
ՀՀ-ում	45460	138650	22663 (11.0)	55227	171	206773

Աղյուսակ 4. ՀՀ մարզերի բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության բաշխումն ըստ տարիքային հիմնական խմբերի (2015 թ.)

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերում տարիքային հիմնական խմբերի միջև բնակչության բաշխվածությունը որոշակի կախվածություն ունի նաև բնակավայրի մարդաքանակից: Լեռնային 109 գյուղերում, որոնք ունեն մինչև 1000 բնակիչ, մինչաշխատունակ բնակչության մասնաբաժինը փոքր է տարիքային տվյալ խմբի միջին ցուցանիշից, իսկ հետաշխատունակ բնակչության բաժինը՝ մեծ (տե՛ս Աղյուսակ 5-ը):

Գյուղերն ըստ մարդաշատության խմբերի (մարդ)	Բնակչության թիվն ըստ հիմնական տարիքային խմբերի				Ընդամենը	
	0-15, մարդ (%)	16-62, մարդ (%)	63 և բարձր, մարդ (%)	15-49, մարդ (%)	Գյուղեր	Բնակչություն
մինչև 200	455 (17.8)	1714 (66.9)	391 (15.3)	737 (28.8)	26	2560
201-500	2933 (19.3)	10239 (67.4)	2016 (13.3)	5051 (33.3)	48	15188
501-1000	4697 (18.4)	17469 (68.6)	3309 (13.0)	7624 (29.9)	35	25475
1001-2000	12286 (20.3)	41344 (68.3)	6930 (11.4)	18660 (30.8)	45	60560

2001-3000	6956 (21.0)	22430 (68.0)	3617 (11.0)	11271 (34.2)	14	33003
3001-5000	3796 (20.7)	12993 (70.9)	1533 (8.4)	5546 (30.3)	5	18322
Ընդամենը	31123 (20.0)	106189 (68.5)	17796 (11.5)	48889 (31.5)	173	155108

Աղյուսակ 5. ՀՀ լեռնային տարածքներում գյուղական բնակչության բաշխումն ըստ բնակավայրերի մարդաշատության և տարիքային հիմնական խմբերի (2015 թ.)

Առավել խոցելի են համարվում լեռնային և բարձր լեռնային մինչև 200 բնակիչ ունեցող թվով 64 գյուղ, որոնք ունեն շուրջ 7 հազար բնակիչ (Աղյուսակ 5 և 6): Միջին մարդաքանակն այդ գյուղերում կազմում է 109 մարդ: Հիմնական տարիքային խմբերի միջև բնակչության նմանատիպ բաշխվածության պատճառով այդպիսի գյուղերը դառնում են ծերացող և հայտնվում են բնագրկման վտանգի առջև:

Կատարված հետազոտությունն ավելի ամբողջական դարձնելու համար ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի տարբեր զուգակցումների հիման վրա առանձնացրել ենք գյուղական բնակավայրերի խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության հիմնական տարիքային խմբերի առկա կառուցվածքով, ժողովրդագրական իրավիճակի պատկերով և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով: Այդպիսի խմբավորման հիմքում դրվել է առանձին բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի և ՀՀ համապատասխան միջին ցուցանիշների համեմատությունը: Նման մոտեցումը հինավորվում է այն հանգամանքով, որ ցանկացած երկրում (բնակավայրում) ժողովրդագրական գործընթացների վերջնական արդյունքում ձևավորվում է բնակչության տարիքային կառուցվածքի որոշակի պատկեր, որով պայմանավորված է բնակչության վերարտադրությունը (ծնելիություն, մահացություն և բնական աճ): Կարելի է ասել, որ յուրաքանչյուր բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքը ժողովրդագրական իրավիճակի խտացված հայելին է, և վերջինիս համեմատությունը ՀՀ համապատասխան միջին ցուցանիշների հետ հնարավորություն է տալիս պարզել այդ բնակավայրի (գյուղի) ժողովրդագրական ներուժը [6]:

Գյուղերն ըստ մարդաշատության խմբերի (մարդ)	Բնակչության թիվն ըստ հիմնական տարիքային խմբերի				Ընդամենը	
	0-15, մարդ (%)	16-62, մարդ (%)	63 և բարձր, մարդ (%)	15-49, մարդ (%)	Գյուղեր	Բնակչություն
մինչև 200	922 (20.8)	2916 (65.6)	603 (13.6)	1207 (27.2)	38	4441
201-500	3229 (21.8)	9929 (67.2)	1626 (11.0)	4276 (28.9)	46	14784

501-1000	4624 (21.5)	14538 (67.5)	2382 (11.0)	5381 (25.0)	34	21544
1001-2000	5381 (22.3)	16199 (67.2)	2535 (10.5)	6819 (28.3)	19	24115
2001-3000	7172 (22.8)	20798 (66.3)	3421 (10.9)	8746 (27.9)	12	31391
3001-5000	10242 (21.3)	31804 (66.3)	5960 (12.4)	12372 (25.8)	12	48006
5001 և ավելի	13890 (22.2)	42466 (68.0)	6136 (9.8)	16426 (26.3)	10	62492
Ընդամենը	45460 (22.0)	138650 (67.0)	22663 (11.0)	55227 (26.7)	171	206773

Աղյուսակ 6. ՀՀ բարձր լեռնային գյուղական բնակչության բաշխումն ըստ բնակավայրերի մարդաշատության և տարիքային հիմնական խմբերի (2015 թ.)

Առաջին խմբում բնակչության առավել բարենպաստ տարիքային կառուցվածք ու ժողովրդագրական իրավիճակ ունեցող գյուղերն են, որոնցում աշխատունակ և մինչ-աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինները գերազանցում են ՀՀ համապատասխան միջին ցուցանիշներին (20.5 և 67.9 %): ՀՀ-ում կան այդպիսի լեռնային 19 և բարձր լեռնային 22 գյուղ (Արագածոտնում՝ 5, Գեղարքունիքում՝ 12, Կոտայքում՝ 6, Լոռիում՝ 6, Շիրակում՝ 12):


Երկրորդ խմբում բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ ու բնակչության տարիքային կառուցվածք ունեցող գյուղական բնակավայրերն են: Այստեղ ևս աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը, իսկ մինչաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը ցածր է համապատասխան միջինից, սակայն ոչ ավելի, քան 1.5 %-ով: Այս խմբի մեջ են մտնում լեռնային 15 և բարձր լեռնային 21 գյուղ (Արագածոտնում՝ 9, Շիրակում՝ 7, Գեղարքունիքում՝ 13, Լոռիում՝ 5, Կոտայքում և Սյունիքում՝ 1-ական բնակավայր):

Երրորդ խմբում ժողովրդագրական լավ իրավիճակ ու բնակչության տարիքային կառուցվածք ունեցող գյուղերն են: Դրանցում մինչաշխատունակ բնակչության մասնաբաժինը բարձր է ՀՀ միջինից, աշխատունակ տարիքինը՝ ցածր, բայց ոչ պակաս 61.7 %-ից, իսկ հետաշխատունակ տարիքինը ՀՀ միջինից բարձր է ոչ ավելի, քան 2 %-ով: Այդպիսիք են ՀՀ լեռնային 22 և բարձր լեռնային 37 բնակավայր (Արագածոտնում՝ 13, Գեղարքունիքում՝ 19, Շիրակում՝ 10, Սյունիքում և Լոռիում՝ 7-ական, Կոտայքում՝ 4):

Չորրորդ խմբում ժողովրդագրական բավարար իրավիճակ և բնակչության տարիքային կառուցվածք ունեցող բնակավայրերն են: Աշխատունակ բնակչության մասնաբաժինն այս գյուղերում բարձր է ՀՀ միջինից, մեծահասակներինը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է ոչ ավելի, քան 2 %-ով, իսկ 0-15 տարեկաններինը

կազմում է 14-19 %: Այս խումբը գյուղերի թվաքանակով ամենամեծն է: Այդպիսիք են լեռնային 42 և բարձր լեռնային 33 գյուղ: Նման գյուղերն ամենից շատը Շիրակում են՝ 23, իսկ Արագածոտնում ու Գեղարքունիքում՝ 14-ական):

Հինգերորդ խումբն ընդգրկում է ժողովրդագրական անբավարար իրավիճակ ու բնակչության տարիքային կառուցվածք ունեցող գյուղերը: Դրանցում մինչաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը ավելի քան 1.5 %-ով ցածր է ՀՀ միջինից, հետաշխատունակ տարիքի բնակչությունը ՀՀ միջինից բարձր է ավելի քան 2 %-ով, իսկ աշխատանուկ տարիքի բնակչության տեսակարար կշիռը 61-67.9 % է: Այս խումբն ընդգրկում է լեռնային 11 և բարձր լեռնային 6 գյուղ:



Նկար 1. ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղերի դասակարգումն ըստ բնակչության տարիքային հիմնական խմբերի

Վեցերորդ խումբը կազմում են ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակ ու բնակչության տարիքային կառուցվածք ունեցող բնակավայրերը, որոնցում աշխա-

տունակ տարիքի բնակչության մասնաբաժինը բարձր է ՀՀ միջինից, իսկ մինչաշխատունակ տարիքինը փոքր է 14 %-ից: Այս խումբն ընդգրկում է լեռնային 14 և բարձր լեռնային 8 գյուղ:

Վերջին՝ յոթերորդ խմբում ընդգրկվել են ժողովրդագրական առավել անբարենպաստ իրավիճակ ու բնակչության տարիքային կառուցվածք ունեցող բնակավայրերը: Դրանցում աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը 61 %-ից պակաս է: Այդպիսիք են ՀՀ լեռնային 23 ու բարձր լեռնային 28 գյուղ (Արագածոտնում՝ 14, Գեղարքունիքում՝ 11, Սյունիքում՝ 9, Շիրակում՝ 8): Այս խմբից բնակչության տարիքային կառուցվածքի մեծ անհամամասնություններով աչքի ընկնող որոշ բնակավայրեր ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Բնակավայրերը	Բնակչության թիվը	Տարիքային հիմնական խմբերը		
		0-15 տ. (%)	16-62 տ. (%)	63 տ. և բարձր
Արա	658	12.9	48.3	38.8
Հալավար	159	8.8	57.9	33.3
Նոր Կյանք	1968	13.6	56.4	30.0
Քաշունի	24	16.7	54.2	29.2
Գողթանիկ	158	26.6	45.5	27.8
Արագած	3923	17.9	46.4	35.7
Ավշեն	176	40.9	40.3	18.8
Սանգյառ	269	47.6	47.2	5.2
Հանքավան	135	20.7	41.5	37.8
Ներքին Շորժա	101	5.0	48.5	46.5

Աղյուսակ 7. Բնակչության տարիքային հիմնական խմբերի կառուցվածքի անհամամասնություններով աչքի ընկնող լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրեր

Կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի առկա իրավիճակն աչքի է ընկնում տարածաշրջանային առանձնահատկություններով և տարբերություններով: Բնակչության տարիքային հիմնական խմբերի կառուցվածքով առավել խոցելի են բնակչության թվաքանակով ոչ մեծ (մինչև 1000 բնակիչ ունեցող) բնակավայրերը, որոնք տարիքային կառուցվածքի նման իրավիճակի պահպանման և վատթարացման պայմաններում կարող են ունենալ սոցիալտնտեսական լուրջ հիմնախնդիրներ և հայտնվել բնագրկման վտանգի առջև: Առաջիկա տարիներին հանրապետական, մարզային և համայնքային կառավարման մարմինների կարևորագույն խնդիրներից պետք է դառնա ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում տարածաշրջանային և ժողովրդագրական հատուկ քաղա-

քականության իրագործումը, քանի որ այդ կերպ կարելի է նպաստել համանման տարածքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանն ու բնակչության տարիքային առավել բարենպաստ կառուցվածքի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

- [1] Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2016, վիճակագրական ժողովածու, Երևան, 2016, էջ 247-328:
- [2] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016, Երևան 2016, էջ 24-25:
- [3] **Պոտոսյան Վ. Ա.**, ՀՀ բնակչության սեռատարիքային կառուցվածքի տարածաշրջանային տարբերությունները և հիմնախնդիրները, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, հ. 51, № 1, 2017, էջ 55-61:
- [4] **Авакян Г. Е.**, Люди и горы (история, теория, практика), Москва, «Мысль», 1989, сс. 15, 230.
- [5] ՀՀ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերում առկա բնակչության բաշխումն ըստ սեռի և տարիքի, ԱՎԾ տվյալներ, 2015:
- [6] **Պոտոսյան Ա. Հ., Քոլյան Շ. Մ., Ստեփանյան Ռ. Ռ.**, ՀՀ գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի բարելավումն որպես գյուղական բնակավայրերի զարգացման նախադրյալ, ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 2014, № 1, էջ 38-45:

Պոտոսյան Վահան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ Բանալի բառեր՝ լեռնային գյուղեր, բարձրլեռնային գյուղեր, բնակչության տարիքային կառուցվածք, տարիքային հիմնական խմբեր, բնակավայրերի մարդաքանակ, հիմնախնդիրներ:

ՀՀ ռազմավարական զարգացման խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ և դեր ունի լեռնային և բարձր լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական, մասնավորապես՝ գյուղական տարածքների ու բնակավայրերի առաջանցիկ զարգացումը: Այլ գործոնների հետ միասին, այդ առաջընթացը կախված է նաև լեռնային և բարձր լեռնային տարածքներում առկա մարդկային ներուժի արդյունավետ օգտագործումից:

Հոդվածում վիճակագրական ցուցանիշների վերլուծության ու ամփոփման հիման վրա տրվել են ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքների գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի տարածաշրջանային առանձնահատկությունները և հիմնախնդիրները:

Потосян Ваган

ОСОБЕННОСТИ И ПРОБЛЕМЫ ВОЗРАСТНОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ В ГОРНЫХ И ВЫСОКОГОРНЫХ СЕЛЬСКИХ ПОСЕЛЕНИЯХ РА

Ключевые слова: горные села, высокогорные села, возрастной состав населения, основные возрастные группы, людность поселений, проблемы.

Среди проблем стратегического развития РА особое место занимают вопросы социально-экономического развития горных и высокогорных районов, в частности, перспективы развития сельских территорий и поселений, что наряду с другими факторами в значительной степени зависит от рационального использования человеческого потенциала указанных районов.

В статье на основе анализа и обобщения статистических показателей представлены территориальные особенности и проблемы возрастного состава сельского населения горных и высокогорных районов РА.

Potosyan Vahan

THE PECULIARITIES AND PROBLEMS OF THE POPULATION AGE STRUCTURE IN THE RA MOUNTAINOUS AND HIGH MOUNTAINOUS RURAL SETTLEMENTS

Key words: mountainous villages, high mountainous villages, population age structure, main age groups, population number of settlements, problems.

The social-economic development of mountainous and high mountainous regions, particularly the progressive development of rural areas and settlements, has a special role and place among the strategic development problems of the RA. Together with other factors, this progress depends on the efficient use of human resources of the mountainous and high mountainous areas as well.

Based on the analysis and summary of statistical data, the regional features and problems of the RA mountainous and high mountainous rural population age structure are presented in the article.